



## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia  
(+374 10) 55-06-02 (Tel./Fax), cs@ysu.am, [www.yasu.am](http://www.yasu.am)

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №5

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ 29.04.2016 ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻՑ

#### Օրակարգ

1. «Հայկական Ծրագրեր» ընկերության հետ համատեղ կենտրոնի ստեղծման և ֆակուլտետի կանոնադրության փոփոխության մասին:
2. Ուսումնական պլանների հաստատում:

#### 1-ին հարցի վերաբերյալ

**Լսեցին՝** Դեկան Վ. Դումանյանը իր ելույթում նշեց, որ 09.09.1915թ. Երևանի պետական համալսարանը՝ ի դեմս Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի և «Հայկական Ծրագրեր» ՍՊԸ-ն կնքել են համաձայնագիր համագործակցության վերաբերյալ: Համաձայնագիրը նպատակ ուներ արդիականացնել և զարգացնել ՏՏ ոլորտի կրթական գործընթացները: Այդ համաձայնագրի շրջանակում առաջարկվում է ֆակուլտետի կազմում «Հայկական Ծրագրեր» ընկերության հետ համատեղ ստեղծել մասնագիտական կենտրոն՝ «Ինֆորմացիոն Համակարգերի Մասնագիտական կենտրոն»: Կենտրոնի հիմնական գործառույթներն են.

Ուսումնական պրոցեսի կազմակերպման հարցեր,

Ուսուցման նոր մեթոդների մշակում և ներդրում,

Դասախոսական կազմի վերապատրաստում,

Ուսանողական պրակտիկայի կազմակերպում ՏՏ ընկերություններում,

Գիտա-ուսումնական սեմինարների կազմակերպում:

Վ. Դումանյանը մասնագիտական կենտրոնի ստեղծման հետ կապված առաջարկեց համապատասխան փոփոխություններ կատարել ԻԿՄ ֆակուլտետի կանոնադրության մեջ:

**Արտահայտվեցին՝** «Հայկական Ծրագրեր» ընկերության նախագահ Ա. Խաչատրյանը ողջունելով ընկերության համագործակցությունը ֆակուլտետի հետ, հույս հայտնեց, որ այդ համագործակցության արդյունքում հնարավոր կլինի ապահովել կապը իրական SS սեկտորի հետ և հնարավորություն կստեղծվի համընթաց շարժվել SS բնագավառի սրընթաց զարգացող կիրառական ուղղվածության ոլորտներում: Այդ իմաստով կարևոր է մասնագիտական կենտրոնի ստեղծումը ֆակուլտետում:

**Որոշեցին՝** Ստեղծել մասնագիտական կենտրոն՝ «Ինֆորմացիոն Համակարգերի Մասնագիտական կենտրոն» և համապատասխան փոփոխություններ կատարել ԻԿՄ ֆակուլտետի կանոնադրության մեջ:

2-րդ հարցի վերաբերյալ

**Լսեցին** – ֆակուլտետի ուսումնական պլանների հաստատման հարցը:

**Որոշեցին** – Հաստատել ֆակուլտետի ուսումնական պլանները:

Գիտական խորհրդի նախագահ

Վ. Դումանյան

Գիտական խորհրդի քարտուղար

Է. Դանոյան